ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 10.07.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « » Հուլիսի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Էդուարդ Փոթոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 10.07.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ապրանքների մատակարարումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Առաջին մատակարարումը իրականացվում է մինչև 20 օրացույցային օրվա ընթացքում, իսկ Մատակարարի համաձայնությամբ՝ հնարավոր է նաև ավելի սեղմ ժամկետում: Հետագա յուրաքանչյուր մատակարարումը իրականացվում է Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջը ստանալուց հետո՝ 3 օրացույցային օրվա ընթացքում:

1.3. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատակարարման սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ Հասցե՝ ք.Գյումրի, Մազմանյան 3բ ՀՎՀՀ 05500411 «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ 1570078724667200 Տնօրեն՝ Սահակ Հակոբյան	«ԱԷՄՋԻ» ՍՊԸ ք.Երևան Աբովյան փ./23 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ՀՀ 19300406500200 ՀՎՀՀ 02863111 Տնօրեն՝ Էդուարդ Փոթոյան
----------	----------
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.
Ստորագրող ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ 3711840906	Ստորագրող ԷԴՈՒԱՐԴ ՓՈԹՈՅԱՆ 3801780325

2026-07-15 17:18:09 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026-07-14 15:27:47 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից